ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/91

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի տնօրեն

Ս. Հայրապետյանի (պետական գրանցման համար 80.130.00843),

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի ներկայացուցիչ

Ա. Պողոսյանի (լիազորագիր՝ տրված 14.04.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.04.2021թ. թիվ 26/26-1/5192-2021 գրությամբ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չուեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 01.04.2021թ. գրության հիման վրա 07.04.2021թ. թիվ 26/26-1/5192-2021 գրությամբ նախաձեռնել է «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Էլեկտրոնային փոստով տեղեկացել եմ այն մասին, որ Ձեր վարույթում քննվում է ՍՑ-ՆԳ-2021/91 ծածկագրով ընթացակարգը՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ «Ցուցակ») ներառելու վերաբերյալ, որի հետ կապված հայտնում եմ հետևյալ դիրքորոշումը:

1.ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ «Պատվիրատու») հայտարարել է գնանշման հարցման ընթացակարգ (ընթացակարգի ծածկագիրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10») Պատվիրատուի կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով (այսուհետ՝ «Ընթացակարգ»): Ընթացակարգը՝ 10-րդ չափաբաժնի մասով, վերաբերվել է ալյումինե կաթսաների (կոտելոկ) ձեռքբերմանը:

Ընկերությունը հայտ է ներկայացրել՝ 10-րդ չափաբաժնի մասով Ընթացակարգին մասնակցելու նպատակով, որն Ընթացակարգի գնահատման հանձնաժողովի (այսուհետ՝ «Հանձնաժողով») 16.03.2021թ. որոշմամբ մերժվել է:

Տեղեկացնում եմ, որ ներկայում Հանձնաժողովի 16.03.2021թ. որոշումը մասնակի «ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված գնանշման հարցման «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ հայտը մերժելու մասով», Ընկերության բողոքի հիման վրա վիճարկվում է ՀՀ գնումների հետ կապված բողքներ քննող անձ Լ. Օհանյանի վարույթում քննվող մեկ այլ ընթացակարգի շրջանակներում (բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/24, 30.03.2021թ.), որի վերաբերյալ որոշումը կարող է ազդել նաև սույն ընթացակարգի արդյունքում կայացվելիք որոշման վրա:

2. Ինչ վերաբերվում է սույն ընթացակարգին ապա հարկ ենք համարում Ձեր ուշադրությունը հրավիրել հետևյալ հանգամանքների վրա:

Ցուցակում ներառելու հիմքերը սահմանված են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, սակայն Ընկերության տիրապետության տակ առկա փաստաթղթերից հասկանալի չէ, թե ըստ Պատվիրատուի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հատկապես որ հիմքն է առկա տվյալ դեպքում:

Գտնում ենք, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը բացակայում են, որի դեպքում ՍՑ-ՆԳ-2021/91 ծածկագրով ընթացակարգը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Ընթացակարգի հրավերի համաձայն 10-րդ չափաբաժնի մասով ներկայացվել են հետևյալ պահանջները.

«10. Կաթսա ալյումինե (հատ)

....Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս: Կաթսայի (տակամասի) տարողությունը առնվազն 1,05 լ, կափարիչի տարողությունը՝ առնվազն՝ 0,4 լիտր: Բաղկացած է երկու մասից՝ կաթսայից և կափարիչից: Կաթսային ամրացվում է մետաղալարից բռնակ, որի միջևամասը՝ կամարաձև: Կափարիչին ամրացված է բռնակ- փական, ընդ որում բռնակի ընդհանուր երկարությունը 15 սմ, իսկ հինական լայնությունը 2 սմ: Կափարիչին ամրացվող մասը՝ 4,5 սմլայնության և 1,5-1,8սմերկարության, իսկ փականը ծալված դեպի ներս, զսպանակաձև' 3 սմ երկարությամբ: Արտաքին մասը ներկված՝ պաշտպանական գույնի հրակայուն ներկով: Ներսամասը քսուկով: Մնացած բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ համարժեք»:

Ընկերության հայտը մերժվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 42-րդ կետով նախատեսված հիմքով՝ արձանագրելով հետևյալ անհամապատասխանությունը՝

« - Ընթացակարգի հրավերում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս», իսկ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1. 5-2մմ, այսինքն Ձեր առաջարկած տեխնիկական բնութագիրը տվյալ չափորոշիչի մասով չի

համապատասխանում ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին:

-Ձեր կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ համարժեք», այնինչ անհրաժեշտ էր բացառել կամ համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը»:

Ինչպես երևում է Հանձնաժողովը հայտը մերժել է այն պատճառաբանությամբ, որ կաթսայի պատերի հաստությունը հայտում նշված էր ոչ թե «2 մմ-ից ոչ պակաս», այլ «1,5-2մմ», ինչպես նաև բացառված չէր «կամ համարժեք» արտահայտությունը:

Կաթսայի պատերի հաստության հետ կապված պատճառաբանությամբ Ընկերության հայտի մերժումն անհիմն է, որովհետև Պատվիրատուն իր 26.03.2021թ. No514/813 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման ներկայացված «կաթսա (կոտելոկ)» ապրանքատեսակի գնման հայտի տեխնիկական բնութագրում (մրցույթի ծածկագիր՝ ԳՀԱՊՁԲ-21-7110) կատարվել է գրասխալ՝ -հաստությունը 1,5-2մմ-ից ոչ պակաս- բառակապակցության փոխարեն տպագրվել է «հաստությունը 2մմ-ից ոչ պակաս»»: Բացի այդ, կաթսայի տվյալ տեսակի պատերի հաստությանը ներկայացվող պահանջները սահմանված են «ГОСТ 17151-81» պետական ստանդարտով, որին համապատասիան էլ ներկայացվել է Ընկերության հայտը:

Այլ կերպ ասած՝ Ընկերությունը, Հանձնաժողովի արձանագրած անհամապատասխանության հետ կապված, տվյալ դեպքում որևէ մեղք չունի և չի կարող կրել դրանից ածանցյալ անբարենպաստ հետևանքները, օրինակ՝ Ցուցակում ներառվելու հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկվելու ձևով:

Ինչ վերաբերվում է «կամ համարժեքը» արտահայտության բացառմանը, ապա այդ մասով Ընկերության հայտի մերժումը, նույնպես, անհիմն է, որովհետև տեխնիկական բնութագրում ուղղակիորեն նշված է՝ «Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ եամարժեք», իսկ հաշվի առնելով այն, որ Ընկերության ապրանքն արտաքին տեսքով համարժեք էր տեխնիկական բնութագրում նկարագրված ապրանքին, ուստի Ընկերությունը հիմք չուներ այն բացառելու: Այլ կերպ ասած հրավերի պայմաններն ուղղակիորեն թույլ էին տալիս առաջարկել համարժեք ապրանք, ինչն էլ Ընկերությունը կատարել է:

Շարադրվածից հետևում է, որ Ընկերության հայտը Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով մերժվել է, մի կողմից, Պատվիրատուի և Հանձնաժողովի մեղքով և նրանց ոչ ճիշտ գործողությունների արդյունքում, իսկ, մյուս կողմից, հայտի մերժման հարցում Ընկերության մեղքը բացակայում է

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «... Մասնակիցն ընդգրկվում է .... ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից»:

Նշված իրավական նորմի համաձայն Ցուցակում ներառելու հիմք է մասնակցի վարքագիծը, որն արտահայտվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից կամ պայմանագիր կնքելուց հրաժարվելու կամ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու ձևով: Տվյալ դեպքում Ընկերությունը հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից չի հրաժարվել, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց չի հրաժարվել և չէր էլ կարող հրաժարվել, որովհետև ընտրված մասնակից չէր, ինչպես նաև չի խախտել պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մաանակցության դադարեցմանը և չէր էլ կարող խախտել, որովհետև պայմանագիր չի կնքել և որևէ պարտավորություն չի ստանձնել:

Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում բացակայում է Ընկերության այն վարքագիծը, որն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն հիմք է Ընկերությանը Ցուցակում ներառելու համար, հետևաբար Ընկերությունը չի կարող ներառվել Ցուցակում:

Ավելին. հաշվի առնելով այն, որ Ընկերության հայտը Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով մերժվել է, մասնավորապես, Պատվիրատուի մեղքով, և

Պատվիրատուն 26.03.2021թ. Ne514/813 գրությամբ իր մեղքն ընդունել է, հասկանալի չէ, թե ինչու է վերջինս դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ Ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

3. Ի գիտություն. Դեռ հայտերը չբացված, խնդրի մասին բանավոր տեղեկացրել ենք Պատվիրատուին և քարտուղարին, որտեղ ասվեց, որ տեղի է ունեցել տպագրական սխալ և դա կլուծվի: Մեր կողմից որոշում կայացվեց մասնակցել մրցույթին, քանի արտադրություն չկար շուկայի պասիվության պատճառով: Ունեինք և ունենք հնարավորություն մասնակցելու մեր կողմից արտադրվող 26 տեսակ ապրանքատեսականիների համար հայտարարված մրցույթներին, որոնք և պատշաճ կերպով արել ենք շուրջ 30 տարի: Երեք տարի շարունակ արտադրվել և մատակարարվել է վերը նշված ապրանքատեսակը մեր կողմից: Կուզենայի նշել, որ մեր կողմից արտադրած ապրանքը չի զիջում արտասահմանյան նույնանման ապրանքներին, ավելին, համեմատության մեջ, նույնիսկ գերազանցում է: Օրինակ Ռուսաստանի Դաշնությունում այս ապրանքատեսակը արտադրվում է 1.2մմ հաստությամբ, իսկ մեր կողմից արտադրվածը ունի 1.5մմ հաստություն, ուստի պարզ է որ ՀՀ-ում արտադրվածը որակական հատկանիշներով գերազանցում է և դեռ մի բան էլ ավելի մատչելի է:

Հարկ եմ համարում նշել, որ շուրջ 3 տարի մեր կողմից ներկայացված նմուշները հաստատվել են ՀՀ ՊՆ-ի կողմից, ապա նոր առաքվել: Քանի որ, ի սկզբանե սխալը կատարվել էր Պատվիրատուի կողմից, որի մասին մենք տեղյակ էինք, մենք մասնակցել ենք մրցույթին, համարելով որ սխալը կուղղվի Պատվիրատուի կողմից, սակայն եղավ այն ինչ եղավ:

Ընկերությունը նաև ունի 108 բաժնետեր, որոնք, նույնպես, օգտվում են, երբ Ընկերությունը աշխատում է շահույթով: Ձեզ եմ ներկայացնում նաև նախորդ տարվա պատշաճ կատարված պայմանագրերը:

Ներկայացնում եմ նաև 17151-81 պետ. ստանդարտից նկարներ, որոնցում երևում է համարժեք կաթսաների պատերի հաստությունների չափսերը ըստ իրենց տարողությունների:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել և ՍՑ-ՆԳ-2021/91 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/91 ընթացակարգի շրջանակներում 16.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենն ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.04.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Մետաղամանեղեն գործարան» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝

-Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում անհրաժեշտ էր բացառել /կամ համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը:

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր / Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1.5 մմ-ից ոչ պակաս/, այնինչ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում էր / Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս/:

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված չէր ապրանքի արտաքին մասը ներկված պաշտպանական գույնի ներկի հրակայունությանը վերաբերող բնութագրիչը, այնինչ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ ապրանքի Արտաքին մասը ներկված լինի պաշտպանական գույնի հրակայուն ներկով:

- չի ներկայացվել ընթացակարգի հրավերի բանկային երաշխիքի (հավելված 3) 5-րդ կետով պահանջված տեղեկատվությունը՝ (Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և 12.03.2021թ ծանուցել էր Մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին ստացվել է Մասնակցի կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերը՝ Հավելված 1.1 և բանկի պաշտոնական էլ. փոստից ծանուցում, որոնց ուսումնասիրման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝

- Ընթացակարգի հրավերում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս», իսկ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1.5-2մմ», այսինքն Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը տվյալ չափորոշիչի մասով չի համապատասխանում ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին:

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ համարժեք», այնինչ անհրաժեշտ էր բացառել /կամ համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը գնահատող հանձնաժողովը մերժել է «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ հայտը ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/91 ընթացակարգի շրջանակներում 16.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/91 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/91 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, 16.03.2021թ. կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով մերժել է Ընկերության հայտը:

3. Սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 29.04.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/24 իրավապարտադիր որոշում:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.04.2021թ. թիվ 26/26-1/5192-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.04.2021թ. գրությունը՝ կից

փաստաթղթերով, Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում՝

- անհրաժեշտ է բացառել /կամ համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը,
- նշված է /Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1.5 մմ-ից ոչ պակաս/, այնինչ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում է /Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս/,
- նշված չէ ապրանքի արտաքին մասը ներկված պաշտպանական գույնի ներկի հրակայունությանը վերաբերող բնութագրիչը, այնինչ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ ապրանքի արտաքին մասը ներկված լինի պաշտպանական գույնի հրակայուն ներկով:

Միաժամանակ արձանագրվել է, որ Ընկերության կողմից չի ներկայացվել ընթացակարգի հրավերի բանկային երաշխիքի (հավելված 3) 5-րդ կետով պահանջված տեղեկատվությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 12.03.2021թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և առաջարկել Ընկերությանը շտկելու անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված անհամապատասխանության շտկման փաստաթղթերում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում՝

- նշված է /Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1.5-2 մմ/, այսինքն Ընկերության կողմից առաջարկված տեխնիկական բնութագիրը տվյալ

չափորոշիչի մասով չի համապատասխանում ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին:

-անհրաժեշտ էր բացառել /կամ համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով 16.03.2021թ. մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 29.04.2021թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/24 իրավապարտադիր որոշում, որի համաձայն՝ պարտավորեցվել է Պատվիրատուին՝ դադարեցնելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, այն հիմնավորմամբ, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի ներկայացված հայտը համապատասխանում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ 10-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին՝ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության 26.03.2021թ. թիվ 514/813 գրությունը:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է</u>, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:***

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝

չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ իրավապարտադիր որոշմամբ արդեն իսկ դադարեցվել է ՍՑ-ՆԳ-2021/91 ծածկագրով ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք ծառայած Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.04.2021թ. թիվ 26/26-1/5192-2021 գրությամբ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**